# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵԱ-ԳՀԾՁԲ-24/36**

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար ապահովագրական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված **ԵԱ-ԳՀԾՁԲ-24/36** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Ընթացակարգի հրավերի տեքստում 1-ին չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում տեղի է ունեցել վրիպակ, որի արդյունքում տեխնիկական բնութագիրը թերի է ներկայացված, ուստի անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

**Փոփոխության նկարագրություն:** Ընթացակարգի հրավերի տեքստում 1-ին չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. «... Կատարողը պարտավոր է իրականացնել «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի ամրացված Higer, Gazel, Ժոնգթոնգ, Ման Լայընս Սիթի, UAZ տրանսպորտային միջոցների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ ծառայություն)՝ ըստ կից ներկայացված հավելված 1-ի: Ապահովագրության ժամկետը՝ գործող ԱՊՊԱ պայմանագրերի ավարտման ժամկետից սկսած 365 օրացուցային օր:
Մեքենաների ապահովագրության պայմանագիրը մտնելու է ուժի մեջ գործող պայմանագրի ավարտին հաջորդող օրը::»

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Սիմոնյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 10)
Էլ. փոստ՝ m.simonyan@promotion.am
Պատվիրատու՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ